

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է Լ Է Փ Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիցուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր ըստ ինչ 2 կոպեկի.

Տ է Լ Է Փ Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Անաստասիա Իսաակովնա ՄԻՐԻՄԱՆՕՎԱ և իշխանուհի Սարգիսովնա
ԱՐԱՄԵՒԼԻՔ յայտնում են ազգականներին և ծանօթներին, որ հանգուցեալ

ԲՈՒՅԿ ԱՐՏԵՄ ՄԻՐՕՆՕՎԻՉ ՄԻՐԻՄԱՆՕՎԻ

Թաղման հանգեւր տեղի կունենայ Հոբեքարթի օր, ապրիլի 26-ին, Հաւաքարի
Էջմիածնեցոյ ա. Գեորգ եկեղեցում: Մարմինը կը թաղվի նոյն եկեղեցու բազում:
Պատարագի սկիզբը առաւօտեան 10 ժամին:

1—1

ԲՈՒՅԿԱՎԱԿՈՒԹԻՒՆ

Անգլիական մամուլի բռնած դիրքը. Չինա-եւ-
պոնական հարցը. Սասունցիների վկայութիւնը.
Հայոց հարցը և եւրոպական մամուլը. Նոր հեր-
բոստ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Խզմիլեան մրցա-
նակաբայութեան յանձնաժողովը. Բաւական է
վերջապէս. Վժռութիւնները. Ռուսաց բեմի վրա.
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—ԽԱՌՆ
ԼՈՒՐԵՐ. Հայոց հարցը ծաղրական թերթերում.—
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.
—ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ. Գրականական աշխարհից:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԲՈՒՅԱԾ ԳԻՐԲԸ

Այժմ, երբ զանազան աղբիւրներից անգ-
լիական հասարակութիւնը ծանօթացաւ
Փոքր-Ասիայի վիճակի հետ և կազմակերպ-
վում է ուժեղ հասարակական կարծիք,
հարկաւոր են համարում մի տեսութիւն
անկէ այն տրամադրութեան մասին, որ ե-
րևում է այդ կարծիքի բերան՝ մամուլի
շրջանում: Վերջին շաբաթներում:

Այնպիսի նշանաւոր և ազդեցիկ լրա-
գիրներ, ինչպէս են «Times», Daily Tele-

ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ

Լեւ. Տօլստոյի ամեն-մի նոր գրութեան, անկախ
նրա բովանդակութիւնից և արժանաւորութիւննե-
րից, գրեթէ միշտ առաւ խոսակցութիւնների ա-
ռաքիւյ է դառնում ընթերցողների շրջանում:—
Դա. կախված է, իհարկէ, հեղինակի վերին աս-
տիճանի հաշվառման և տարածման անունից,
չնորոգ մի կողմից նրա անցեալի, երբ նա ստեղ-
ծագործում էր «Война и Миръ», «Анна Каре-
нина» և այլն, միև կողմից ներկայի, երբ նա
կատարում է կիսամարգարեական դեր իր խոր-
հրդաւոր, յաճախ և անխորհուրդ վարդապետու-
թիւնների:

Տօլստոյի վերջին «Хозяинъ и Работникъ»
գրութեանը նոյն-խաչ ֆարսաւայից զուրկ մի գը-
րութեանը է: Մի ունի հարստացած-վայսաւու-
մութիւն, իսկ այժմ երկրորդ կարգի վաճառա-
կան և եկեղեցու երէցութիւն՝ վասիլ Անդրեևիչի
Բրեխուճով, լսելով որ մոռացաւ զիւրում մի կա-
րուածատէր էժան գնով ծախում է իր անտառը,
առանց դանդաղելու, ձմեռվայ մի բուր օր վերց-
նելով եկեղեցական դուռնից 2300 ռ. և աւելց-
նելով դրա վրա իր սեփական 700 ռ.—ճանա-
պարհ է ընկնում այդ կարուածատէրի մօտ՝ գնե-
լու նրա անտառը: Բրեխուճով շտապում է գնալ
այդ օրը, որովհետև գիտէր նախ, որ քա-
ղաքացի մի քանի վաճառականներ նոյնպէս պատ-
րաստվում են գնել այդ անտառը և երկրորդ, ո-
րովհետև, ինչպէս ասեցինք, անտառը սլիտի
ծախվել շատ էժան, նրա իսկական գինը 20,000
ռ. էր, իսկ Բրեխուճով յոյս ունէր գնել 700
րուբլով:

Դուրս գալով իր ծառայ Նիկիտայի հետ, նա
ճանապարհը կորցնում է բուրի չնորոգ և

graph" և «Daily News», որոնք իրանց
թղթակիցների միջոցով վերջնականապէս
հաստատեցին Սասունի կոտորածի սար-
սափելի մանրամասնութիւնները, դրական
և որոշ դիրք են բռնել դէպի Հայոց
հարցը: Նրանք դժգոհ են կառավա-
րութեան ներկայ դանդաղ քաղաքակա-
նութիւնից և պահանջում են, որ Անգլիան
ներգործական դեր կատարի այնպիսի մի
կարգ հաստատելու թիւրքաց. Հայաստա-
նում, որ քրիստոնեայ ազգաբնակչութեան
կիսերը և զարգացումը կատարելապէս ա-
պահովված լինի և Սասունի կոտորածի
նման երեւոյթներ այլ ևս անկարելի դառ-
նան այդ երկրում:

Նոյն ձևով են խոսում «Daily Graphic»,
«Liverpool Post» և դաւառա-
կան լրագրական սինդիկատին մասնակցող
լրագիրները: Ինչ վերաբերում է երկրորդական
թերթերին, ահա նմուշներ նրանց կար-
ծիքներից:

Լոնդոնի «Societъ» լրագիրը ասում է.
«Թէև մենք այն կարծիքի չենք, որ Ղարա-
տօնը հմուտ քաղաքագէտ է, բայց բոլոր-
վէն համաձայն ենք նրա հետ, որ թիւրքը

դուրս է գալիս մի ուրիշ գիւղ: Այդ գիւղից նա
նորից ճանապարհ է ընկնում և նորից շեղվում:
Մտած է և բուր: Առաջ գնալու հնար չը կայ:
Պէտք է գիշերել դաշտում: Յանկարծ Բրեխուճովի
գլխում մի միտք է ծագում. թողնել կառքը և
ծառայել, վերցնել ձին, հեծնել և մենակ փախ-
չել: Այդպէս էլ անում է: Բայց որովհետև ճա-
նապարհը բաց դաշտի մէջ՝ չէ երևում, ձին մի
քանի պոյոյտներ գործելուց և ձիւնի մէջ քանդու-
թաւով վերցնելուց յետոյ, վերադառնում է կրկին իր
նախկին տեղը—կառքի մօտ:

Նիկիտան գրեթէ սառչելու մօտ է: Բրեխու-
ճով, առանց երկար մտածելու, պառկում է Նի-
կիտայի վրա սայլի մէջ, և մի քանի ժամ անցնե-
լուց յետոյ, ընում է և սառչում բոլորովին: Միև
օրը, կէսօրվայ մօտ, գիւղացիները պատահմամբ
գտնում են Բրեխուճովի ու ձիւնը դիակները, և
հաղիւհաղ չնչոյ Նիկիտային և գիւղ հասցնում:
Նիկիտան ուշքի է գալիս, առողջանում է և, 20
տարի ապրելուց յետոյ, մեռնում:

Ահա դա է պատմութեան ամբողջ բովանդա-
կութիւնը:

Չը նայելով իր հիւսուածքի պարզութեանը՝ նա
շատ շատերին խօսեցնել տուց իր մասին: Մի-
քանի գրողներ նոյն-խաչ շտապեցին այդ գրութե-
անը Տօլստոյի գրութեանը մէջ chef d'oeuvre ա-
նունակել:

Գրութեանը անպայման գեղարուեստական գը-
րութեանը է. ոչ միայն գործողները—ձին, Նիկի-
տան, Բրեխուճով,—այլ և այն միջնորդը՝ որանդ
նրանք չնչոյ և պատում են—շատ կենդանի են
գուրս բերված: Գեղարուեստական կողմից գը-
րութեանը, ճշմարիտ է, շատ գեղեցիկ է, բայց թէ
ինչի մէջ է կայանում հեղինակի տենդենցիան և
ինչ ցանկութիւն է ունեցել Տօլստոյ գրելով
«Տէրը և Ծառան»—գուշակել մի քիչ դժ-
ւար է:

Որքան էլ տարբեր չը լինին նրա մասին
յայտնված կարծիքները, սակայն, մեզ թվում է,

իշխանութիւնը այլ ևս անկարելի է տա-
նել: Լոնդոնի մի ուրիշ լրագիր, «St. Paul's»,
մի ընդհանուր ակնարկ գցելով իրերի վի-
ճակի վրա, ասում է. «Եթէ սպասենք Մուշի
քննիչ յանձնաժողովին՝ երևի դեռ շուտով
պատասխան չենք ստանայ և պատասխան
էլ կասկածելի է. բայց երբ հերթը կը
հասնի եւրոպական ազգերի կարծիքին,
այդտեղ շատ քիչ կասկած կարող է լինել,
որովհետև Թիւրքիան արդէն լցրել է
համբուրութեան բաժակը»:

Լոնդոնի «Illustrated Police News» լրա-
գիրը գրում է. «Ինչ ենք տեսնում դուրս
է գալիս, որ քրիստոնէութիւնը Փոքր-Ա-
սիայում մի յանցանք է, և հարածվում է:
Այժմ երբ հաստատված է, որ Սասունի
կոտորածի ծրագիրը մշակվել է և, Պոստում,
քաղաքակրթված աշխարհը, առանց տա-
տանվելու, պէտք է միաձայն բողոքի՝ ամե-
նախիտ կերպով: Երբ առաջին անգամ
սարսափելի տեղեկութիւններ ստացվեցին
Սասունի անցքերի մասին, մենք շատ մեծ
կասկածով վերաբերվեցինք, որովհետև չէինք
կարող հաւատարմորէն այն բոլոր
լրատվութիւններից յետոյ, որ նա ստացաւ, թոյլ
կը տայ իրան մի այդ տեսակ անհաւատա-
րի դադանային եղանակգործութիւն»:

«Devon and Exeter Daily Gazette» լրա-
գիրը ասում է. «Այժմ նշանաւոր անձինք,
որոնք համակրում են Հայոց դատին և կը
ցանկանային նրան հասարակական ամենա-
լուրջ ուշադրութեան առարկայ դարձնել,
գիտարկեցին միջ ինչ, որովհետև
կառավարութեան ղեկը իրանց ձեռքին է:
Բայցի համար դժուար է խօսել, Գլարա-
տօնը նոյնպէս, և բացի դրանից՝ մեծ ծերու-
նին քան տարիառաջ շատ աւելց է թաղմ

որ Տօլստոյին ամենասիրելի, ամենաանուրակա-
ն միտքը թաղված է գրութեան վերջին երեքներում:
Թող ներքի մեզ այդտեղից մի երկու փոքրիկ
կտորներ բերելու:

Վերջնականապէս ստաշուող մի քանի բոյս
առաջ Բրեխուճով, դաւաճանալով: Խօսենք Տօլ-
տոյի լեզուով, չղգում է որ իր առաջ կանգնած է
մահը և բնաւ չէ արանդուռել: Եւ նա մտաբերում
է, որ Նիկիտան, որ պառկած է նրա տակ
այժմ տաքանում է և շուտ աւանում, և նրան
թվում է, որ նա այժմ «Նիկիտան է, իսկ Նիկի-
տան» ինքն և որ իր կեանքը Նիկիտայի կեանքի
մէջ է և ոչ թէ իր: Եւ ինչպէս է Նիկիտան—շա-
րունակում է մտածել Բրեխուճով, դաւաճով Նիկի-
տայի չնչոյութիւնը—լը նշանակէ կենդանի և
և եւ իւր մի ինչ-որ նոր բան, որ առաջ անյայտ
էր նրան, ինչու է նրա վրա: Եւ նա սկսում է
մտածել, ինչու այն մարդը, որին անուանում են
վասիլ Բրեխուճով, թոյլ էր տուել ամբողջ ժա-
մանակ զբաղվելու նրանով, ինչով զբաղվել էր:
Ձգաղվել էր—արդարացիում է ինքն իրան Բրե-
խուճով.—որովհետև չը գիտէր թէ քանի ինչոյմ
է, չը գիտէր այն, ինչ-որ ևս այժմ գիտեմ:
Եւ լսելով մի ձայն, որ նրան կանչում էր, նա
պատասխանում է իր բերկրութեամբ և ինքնա-
հաճութեամբ. «գալիս եմ, գալիս եմ»—և փա-
կում է աչքերը:

Այդ տողերի մէջ զգացվում է Տօլստոյի վեր-
ջին գրութեանը մէջ արժանաւոր իրէան. «Մա-
նը ոչ թէ սարսափելի է, այլ, ընդհանրապէս,
հաճելի, երբ դուք աշխատում էք բարութիւն
անել: Նոյն իսկ Բրեխուճով, որ իր կեանքը անց-
րել էր հարստահարութեամբ, կեղեքումներով և
խաբէրայութեամբ, հաճութեամբ է գրվում մահը,
որովհետև նրան ջնջվել էր մահից ազատել Նի-
կիտային»:

Բարի լինել—անպայման հարկաւոր է ամեն-մի
մարդու համար: Բարութիւն անելով միշտ հան-
գիտ է մարդու խիղճը, եթէ միայն մարդս բա-

էր, իսկ այժմ տարիքը իրանց ազդեցու-
թիւնը արել են: Յամենայն դէպս կառա-
վարութեան վիճակը փոքր ինչ անյար-
մար է»:

Լոնդոնի «Echo» լրագիրը բացականչում
է. «Ինչ ա՛յժմ էլ Թիւրքան չը խօսէր բա-
րենորդութեան մասին, երբ բացվեց այն
սարսափելի ոճիւրը, որ կատարվել էր Սա-
սունում և որը, չը նայելով Թիւրք կառա-
վարիչների դրած արգելքներին, բացվեց
Եւրոպայի առաջ: Քաղաքակրթ մարդկու-
թեան խիղճը արթնացել է»:

«The Birmingham Daily Post» լրագրում
չենք միջնորդ տպագրել է մի նամակ, ո-
րով յայտնում է, որ ժամանակ է մի տեղ
ժողովել և մի որոշող յայտնել այն բար-
բարոնական գործերի դէմ, որ կատարվում
են, պահանջելով, որ միջոցներ գտնվեն,
վերջ գնելու նրանց՝ ընդ միշտ:

Բիրմինգհամ քաղաքի մի ուրիշ լրա-
գրում, «Birmingham Gazette», երկու անձ
ևս յայտնում են իրանց համակրութիւնը
և պատրաստութիւնը ժողովին մասնակցե-
լու, բայց երրորդ նամակը, որ պատկանում
է յայտնի թիւրքապետ Ալմեդ Բարուէտին,
աշխատում է ցոյց տալ, որ խելացի բան
չէ հին կազմը այդպէս թնթել կերպով
կարել և այնպիսի գործեր կատարել, որոնք
պատեհականութեան բնաւորութիւն են
կրում: Բարուէտը չէ հաւատում Բուսաս-
տանի և Ֆրանսիայի համբարշտութեան և
այդ պետութիւնների վերաբերմամբ շատ
թերահաւատ է:

Պլինուս քաղաքում հրատարակող «West-
ern Mercury» լրագիրը ծաղրում է Բարու-
էտի երկեղեցիներ և թիւրքասիրութիւնը ու
ասում է, որ քննիչ յանձնաժողովը եղբա-

րոյականապէս փչացած չէ: Բայց ինչ զին ունի
Բրեխուճովի բարութիւնը, քանի որ նա անդայ
է կատարվել (մենք իրաւունք ունենք նոյն-իսկ
կարծելու, որ Բրեխուճով, պառկելով Նիկիտայի
վրա,—դիտաւորութիւն ունէր, ոչ թէ նրան տա-
քացնելու, այլ իրան տաքացնելու): Ինչ զին ունի
այդ բարութիւնը, եթէ նա, Բրեխուճով, դա-
նից մի քանի բոյս առաջ, մտադրվել և վճռել
էր, թողնելով Նիկիտային ճակատագրի կամքին,
ձի հեծնել և փախչել մենակ: Վերջապէս ինչ
զին ունի այդ ակամայ բարութիւնը, երբ նրա
ջրի մէջ դեռ դառնում են եկեղեցու 2300 ռ:

Տօլստոյ իր միտքը աւելի է արժանաւոր յե-
տադայ տողերում: Այդ գիշերվայ յաջորդը օրը,
երբ գիւղացիները տանում էին Նիկիտայի կիտա-
մեռ մարմինը գէպի գիւղը, վերջինս ուշքի գալով
և չղգալով իրան այն աշխարհի մէջ, աւելի
տխրեց քան ուրախացաւ, հաւատացնում է
Տօլստոյ, և ապացուցանում է նրանով, որ համ-
բերական կեանքը Նիկիտային սիրելի, հասկանալի
և գրաւիչ էր: Գրութեանը այսպէս է վերջանում.
«Եւ թէ վատ հանդերձեալ կեանքում, հիւս-
թափվեց թէ ոչ Նիկիտան այդտեղ, դուռ թէ ոչ
այնտեղ նա, ինչ-որ սպասում էր գտնելու.—այդ
բոլորը մենք չաւ չուտով կիսմանք»:

Միտքիցվում, կրօնական խորհրդաւորութիւ-
նից, ինչպէս տեսնում էք գուրկ չէ այդ գրութե-
անը: Եւ եթէ գրողների կարծիքները տարբեր են
այդ գրութեան մասին,—դրա զլխաւոր շարժա-
ռիթը, խնդիրը միմյանցով պայմանը, մեր կար-
ծիքով,—գրութեան բարձր գեղարուեստականու-
թիւնն է, որը չէ թողնում մարդկանց դրա
ետեղի տեսնելու գրութեան իսկական խորհուրդը
և արժէքը:

«Տէր և Ծառայ» գրութեանը այժմ մտել է
հեղինակի գրութեանը վերջին XIV-որդ հա-
տորը:

Ա. Գ.

կացութիւնը այլ ևս ոչ ոքի համար հե-
տաքերական չէ, որովհետեւ լուսավորված
աշխարհը արդէն կազմել է ամենաճիշդ
գաղափար փոքր-Ասիայում տիրող կարգերի
մասին Այժմ բոլորովին պարզ է նշանակե-
լով ինչու թիւրքաց փաշաները այդքան
արդեւրեւն էին դնում եւրոպական թղթա-
կիցների առաջ՝ գնալու Հայաստան: Շատ
ուրախալի է, որ անգլիական զանազան
քաղաքներում սկսում են ժողովներ կազմել
այդ խնդրի առիթով: Բայց լաւ կը լինէր,
եթէ մեր եկեղեցական, քաղաքական և
հասարակական հիմնարկութիւնները միա-
նային մի ընդհանուր բողոք յայտնելու
Հայաստանում տիրող անկարգութիւնների
դէմ:

Նոյն քաղաքում տպւող «Western Mor-
ning Post» թերթը, հաղորդելով «Times»-ի
թղթակցի վերջին հետազոտութիւնները,
խորին վշտ է յայտնում հայերի վիճակի
մասին և ծաղրելով ասում է, որ Թիւր-
քիան փոխանակ գործ չիսկսել կը բաւա-
կանանայ «Times»-ի համարներին մուտքը
դէպի Թիւրքիա արգելելու:

Շեֆիլդ քաղաքում հրատարակւող «The
Sheffield Independent» լրագիրը ասում է.—
Ամբողջ քաղաքակրթված աշխարհը զայրա-
ցած է այն վայրենի գործերի դէմ, որ կա-
տարել է թիւրքը միայն Աշմէր Բարդաւազ
և նրա Շեֆիլդի գիւնակիցը անուղղելի են
մնացել:

Բաւականանալը այդքանով: Ուրեմն ընդ-
հանուր կարծիքը դատաւարաւորում է թիւր-
քերին, և պահանջում է, որ կատարու-
թիւնը շուտափոյթ միջոցներ ձեռք առնի
բարենորոգումներ մտցնելու Հայաստանում:

ՉԻՆԱՆԱՊՈՒՅԱԿԱՆ ՀԱՐՑՈՒ

Ձեռքը ձեռքին պատերազմից առաջ ևւ-
րոպական պետութիւնները սկսել են կա-
տաղի լրագրական կոլւ՝ չինա-եւաստանի
հարցի առիթով: Եւրոպական երկը մեծ
պետութիւնները Ֆրանսիան, Ռուսաստանը
և Գերմանիան, դժգոյ լինելով եւրոպա-
ցիների կապած դաշնակցից Չինաստանի
հետ, որով Եւրոպայի ասիական ամենագո-
րեղ պետութիւն է դառնում հեռու արեւ-
ելքում, և ուրեմն վառագուր մի ոյժ
եւրոպական պետութիւնների համար, պա-
հանջում են նրանցից չափաւորութիւն իր
պահանջների մէջ և դաշնակցի մի քանի
կէտերի փոփոխութիւն:

Միւս կողմից եւրոպական այդ երկը պե-
տութիւնները շատ դժգոհ են Անգլիայի
ընթացքից, և մեղադրում են նրան, որ նա
գաղտնի դաշնագիր է կապել Եւրոպայի
հետ, որով Անգլիան և Եւրոպայի պէտք
է հաւասարապէս բաժանեն իրանց մէջ
յաղթութեան բոլոր արդիւնքները: Անգ-
լիայի այդ քայլին են վերադրում եւրոպա-
կան երկը պետութիւնները Եւրոպայի
շարժանքի մեծ պահանջները, որոնցով
Չինաստանը, 400 միլիոն ազգաբնակչութիւն
ունեցող պետութիւնը, խաղալիք է դառ-
նում Եւրոպայի ձեռքում: Ասում են, որ
Ամերիկայի Հիւսիսային Միացեալ-Նահան-
ների կառավարութիւնը ևս միանում է
Անգլիայի հետ այդ հարցում:

Ուրեմն ներկայումս այդ հարցը հետե-
ւեալ պատերին է ներկայացնում: մի կողմից
կանգնած են Ֆրանսիան, Գերմանիան և
Ռուսաստանը, միւս կողմից Անգլիան, Եւ-
րոպիան և Միացեալ-Նահանգները: Այդ
երկու եւրոպական հակադէմքեր, ի հար-
կէ, պնդում են իրանց պահանջները վրա:
Թէ ո՞ւմ ձայնը աւելի զորաւոր կը լինի, և
դրանցից ո՞րն պահանջները կը յարգվեն,
դա ցոյց կը տայ ապագան:

ՍԱՍՈՒՅՑԻՆԵՐԻ ՎԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Լիւբլիպուլ քաղաքում հրատարակւող «Liverpool
Daily Post» լրագրի ապրիլի 15-ի համարում ման-
րաման կերպով նկարագրված է սասունցիների
ուղեւորութիւնը դէպի Հաւորդըն: Այդ նկարագրու-
թիւնից քաղում ենք հետեւեալ տեղեկութիւնները:

Լոնդոն եկած սասունցիները հայկական ցեղի
տիպաբանական ներկայացուցիչներ կարող են հա-
մալվել: Պետքը մի հարուստ երկրագործ է ե-
ղել, իսկ վարդանը տաւարապահ, կամ աւելի
ճիշդն ասած՝ ոչխարապահ: Նրանք կարողացել են

իրանց ազատել բարբարոսական կոտորածից, բայց
կորցրել են ամեն բան թէ իրանց ազգականներին և
թէ իրանց հարստութիւնը: Պետքը թաղել է իր
հօրը և մօրը և յետոյ, ընդհանուր փախուստի ժա-
մանակ, հեռացել է Սասունից և եկել այս երկրին:

Պետքը կարողացել է կռուի միջոցին շատ
թւարկ սպանել, որով անուն է ստացել իր ընկեր-
ների չըջանում: Նա քսան և վեց տարեկան է միայն:
Նա տեսել է, ինչպէս քիւրդերը կողոպտել են
Գեղիկեղանի եկեղեցին և տեղեկացել է, որ
սուրբ անութիւնը և դարդերը վաճառել են Մու-
շում: Նա պատմում է, որ արծաթայ խաչերից
մէկը քիւրդերը կապել են շան վզից: Պետքը
ծնողները, եղբայրները և ազգականները պահված
են եղել լեռներում: Բայց նրանց գտել են թիւր-
քերը և կոտորել: Պետքը հաստատեց լրագիր-
ներում եղած այն լուրը, որ սասունցի կանայք,
չը ցանկանալով թիւրքերի ձեռքն ընկնել, ժայռի
բարձրութիւնից իրանց խորխորատ գցեցին:

Սասունցի վարդանը պատմեց, որ նա կորցրել
է իր բոլոր ազգականներին, բացի կնոջից, որի
մասին տեղեկութիւն ունի, որ նա գտնվում է բա-
րեկանների մօտ:

Մեր թղթակցիցը, որ իր տեղեկութիւնները կա-
րողացաւ, ձեռք բերել չորհրդ ամերիկացի հայ Բ.
Ալանի, յայտնում է նոյնպէս, որ երէկ երեկո-
յան սասունցիները և անգլո-հայկական ընկերու-
թեան մի քանի անդամները հրաւիրված էին թէյի
Հաւորդընի ծխական քահանայ Գլադստոնի տանը:

Սասունցիների տուած մանրամասն վկայութիւն-
ները ներկայացված են լոյզ կիմբերլէյն:

Այժմ, երբ դանադան աղբիւրներից հաստատված
է հայկական սարսափների ճշդութիւնը, մնում է
միայն հասարակաց կարծիքի ուժեղանալը, որի վրա
յննված՝ լոյզ կիմբերլէյն կը կարողանայ խիստ
ոճով խօսել թիւրք կառավարութեան հետ:

ՀԱՅՈՑ ՀԱՐՑՈՒ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

I
Պիմուտ քաղաքի «Western Morning News»
լրագրի սեփական թղթակցիցը հաղորդում է ապ-
րիլի մէկից, Կ. Պոլսից, որ սուլթանի հրամանով
մեծ վիզիրը արտաքին գործերի, ներքին գործերի
և արդարադատութեան մինիստրների հետ երէկ ու-
նեցաւ մի խորհրդակցութիւն՝ մշակելու բարենո-
րոգութիւնների մի ծրագիր Հայաստանի համար:
Խորհրդակցութիւնը տեղ է հինգ ժամ հետեւա-
նը յայտնի չէ:

II
Լոյզ կիմբերլէյն, իր մեծ ճառից յետոյ, որ ար-
տասանել էր հայկական պատգամաւորութեան ա-
ռաջ, ապրիլի 13-ին, իր մի ուրիշ ճառում, նույն-
րեց մի քանի համակրական խօսքեր հայկական
դատին: Նա ասաց, որ թէ ինքը և թէ իր ընկեր-
ները մեծ ցատկայնութեամբ են վերաբերվում դե-
պի հայերի վիճակը և թող անգլիացիները հաւա-
տան, որ նա ամեն ջանք գործ կը դնի զբաղված
հետեւանքների հասնելու: հայոց հարցի համար
Անգլիական լրագիրները ընկնում են թիւրքերի
լոյզ կիմբերլէյնի ճառը, ընդհանրապէս շատ գոհ
են և վստահութեամբ են նայում իրանց կառա-
վարութեան վրա:

III
Թիւրքիան այժմ միջոցներ է որոնում ձգձգել
Հայաստանի բարենորոգութիւնների խնդրը՝ դա-
նազան նոր ծրագրերնրով և առաջարկութիւննե-
րով:

Անգլիական լրագիրների ասելով, Բարձր Գուռը
այժմ կամենում է Սասունի հետազոտութեան գոր-
ծը ենթարկել մի նոր յանձնաժողովի ընտրութեան,
որ պէտք է կազմվի Պոլսում և դանվի թիւրք
բարձրաստիճան անձանց մէկի նախագահութեան
ներքոյ: Ուրիշ ինչ բանի ընդունակ է թիւրքաց
կառավարութիւնը, եթէ ոչ այդպիսի անվերջ աչ-
քակապութիւններ:

IV
Լոնդոնի «Daily Graphic» պատերազմաբար լրագ-
րի ապրիլի 17-ի համարում տպագրված է երկու
պատկեր, որոնք ներկայացնում են Լոնդոն դնա-
ցած սասունցիների Հաւորդընում Պատկերներից
մէկը ներկայացնում է եկեղեցու ներքը առաւա-
տեան ժամերգութեան միջոցին, մի կողմում ծե-
րունի Գլադստոնը, միւս կողմում սասունցիները:

Ներկրող պատկերը ներկայացնում է Հաւորդընի
կայաւանը, ուր Հերբերթ Գլադստոնը Հմաք բա-

րեաւ է ասում սասունցիներին (good bye): Սա-
սունցիների հետ նկարված են անգլիացի Գրին
հեղեորականը, և զօկտոր Ալանը:

V
Վարնայում տեղեկութիւններ են ստացված
թիւրքաց Հայաստանից, որ թիւրքաց իշխանու-
թիւնները ամեն ճիշդ գործ են դնում ջնջելու Սա-
սունի կոտորածի բոլոր հետքերը և զիւրերը գոհ-
նի դիակները փոսերից ու ջրհորներից հանում են
ու տանում ուրիշ տեղեր: Այդ բոլորը անվում է,
ի հարկէ, այն նպատակով, որ համոզեն յանձնա-
ժողովի անդամներին, թէ հայ վկաների ցուցմունք-
ները սուտ են և մոտեցածին:

ՆՈՐ ՀԵՐԳԻՄ

Պետերբուրգի թիւրքաց դեսպանութիւնը հե-
տեւալ հերբում է տպել «Новости» և «Новое
Время» լրագիրներում:

«Новости» լրագրում, ապրիլի 14-ից, տպված
է «Königsberger Hartungsche Zeitung» լրագրից
արտաստված նկատողութիւնը այն բանի մասին,
թէ «Բեյաէրի գործակալութեան» ներկայացուցիչ-
ներից մէկի հաղորդած տեղեկութիւնների համա-
ձայն, հայերի մէջ տեղի ունի յիղափոխական մի
շարժում:

«Պաշտօնական աղբիւրներից ստացված տեղե-
կութիւնների հիման վրա, Պետերբուրգի օսմա-
նեան դեսպանութիւնը խնդրում է «Новости» լրագ-
րի խմբագրից տպել այդ տեղեկութեան կտրական
հերբում (démenti absolu), որովհետեւ այդ տե-
ղեկութիւնը չէ համապատասխանում այն կատա-
րեալ հանգստութեանը, որ, փառք Աստուծու, ներ-
կայումս թաղաւորում է ամբողջ կայսրութեան
մէջ: Բոլոր ընտելիները, առանց խտրութեան ցե-
ղի և կրօնի, խաղաղութեամբ զբաղվում են ի-
րանց գործերով: Նորին կայսերական մեծութիւն
սուլթանի հայրախում հովանաւորութեան տակ:
Ոչ մի կասկած չը կայ, որ այդ յուզիչ լուրերը
հնարել են կարգապահութեան թշնամիները՝ օս-
մանեան կայսրութեան վարիչ կոտորու համար
հասարակութեան աչքում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻԶՄԻՐԱՆ ՄԻՋԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱ-
ԺՈՂՈՎԸ

Փաստերը կամաց-կամաց բերում են այն եզրա-
կացութեան, որ Իզմիրեան մրցանակաբաշխութեան
կազմակերպութիւնը շատ տխուր վիճակի մէջ է
գտնվում, որ մրցանակաբաշխութեան նպատակը
ոտի տակ է տուած, որովհետեւ զօլասանքի ու
խրախոյսի են արժանանում այնպիսի շարադրու-
թիւններ և աշխատութիւններ, որոնք միայն
ծաղրի և արհամարհանքի են արժանի:

Ամեն մի հիմնարկութիւն կարող է սխալներ
գործել, որոնց վրա պէտք է նայել իրրեւ բացա-
ռական դէպքերի վրա. բայց երբ մրցանակի է
արժանանում մի այնպիսի զիւր, ինչպիսին է
Հայոց պարբերական մամուլի պատմութիւնը,
որի մասին այստեղ առիթ ունեցանք մի քանի
խօսք ասելու, այն ժամանակ այլ ևս անկարելի
է սխալ բառը գործածել և ներողամիտ լի-
նել:

Ջոկ բան է, եթէ զիւրը մէկը ներկայացրել է
մի շարադրութիւն Ուղիների կեանքի և լեզուի
մասին, Գարաբաղի ժողովրդական սովորութիւն-
ների մասին, կամ մի այլ այնպիսի նիւթի մա-
սին, որը ընկնել, ստուգելը դժուար կամ նոյն
խիւ անհարկն է Կ. Պոլսի գրադէտներ համար:
Այդտեղ գրուածքի, շարադրութեան ընդհանուր
բնաւորութիւնը, նիւթերի դասաւորելու ձեւը,
գիտնական եղանակների ներկայութիւնը բաւա-
կան են, որ աշխատանքութեան մասին կարելի
լինի ենթադրական, բաւականաչափ ճիշդ կար-
ծիք յայտնել և այդպիսով գնահատել գոյծը:

Եթէ այդպիսի դէպքում սխալ գործվի, այդ
սխալը հասկանալի է, նա անխուսափելի է և ու-
րեմն ներելի:

Բայց բոլորովին այդպիսի դէպքերից չէ յանձ-
նաժողովին այն վարմունքը, որով նա մրցանակի է
արժանացրել ոմն Լեոնեանի խալ, տղա և ծի-
ծաղիկ գրուածքը, որի պակասութիւնը տեսնելու
համար ամենին հարկաւորութիւն չը կար ունենալ
մեծ գրական պատրաստութիւն, այլ բաւական էր
բարեխիղճութիւն և հասարակ խելք:

Անկարգ և տխուր վիճակի մէջ է գտնվում Իզ-
միրեան մրցանակաբաշխութեան գործը, և եթէ
նրան ղեկավարող անձինք ուշք չեն դարձնի այդ
թշուառ դրութեան վրա, նրանք բոլորովին կը
խայտառակեն ամբողջ գործը և ոչ մի լուրջ ու
բարեխիղճ հեղինակ այլ ևս չի վստահանայ ու-
ղակել իր գրուածքները այդ մրցանակաբաշխու-
թեան յանձնաժողովին:

Ջարմանալի է, որ Կ. Պոլսի հայերը մի այդ-
պիսի ազնիւ և ընքոյշ գործ չը կարողացան նրա
արժանի բարձրութեան վրա պահպանել, նա մա-
նաւանդ, որ աւարկան պոլսեցիների սիրած ասպա-
րէզին է վերաբերում, այն է գրական և զուտ
գրական աշխարհին:

ԲԱՒԱԿԱՆ ԵՎ ՎԵՐՋԱՊԵՍ

Բաւականին ամօթաբեր պատկեր է ներկայաց-
նում մեր կեանքը: Որ կողմ կողմէք աչք դարձ-
րէք, հաւաքանքը միայն կը թիթեկանէ ձեր սիր-
տը:

Այս տեսնում էք համալսարանական կրթու-
թեամբ մի երիտասարդ, իր հասարակութեանը,
իր ժողովրդին ծառայելու տենչով վառված, իր
երազներն երբ և իցէ իրականացած տեսնելու
տենչով զինուորված, արհամարհում է աշխարհը,
ծաղրում է կեանքի հրապուրը և վանք է մտնում
վեղարի և ֆարաշայի մէջ նա որոնում է իր
գաղափարներն իրականացնելու ամենահզօր դէն-
քերը: Անցնում է մի քանի տարի. դուք կանգ-
նած էք նոյն երիտասարդի սնարի առջև: Նրա
ուժերը սպառված են. նա յուսախաբված, ար-
համարհող ժպիտը չըբռնէ իր բարկու-
թեամբ պատրաստվում է յաւիտեան հեռանալ
այն ժողովրդից, որի համար ապրել էր երազում,
որի աչքերում իր արտասուքն էր տեսնում, որի
ցատկերը զգում էր իր սրտում: Նրա ոսկի երազ-
ները փշուրված, խորտակված են:

Այս մի անձնուրաց անձն, մոռացած կին,
ղաւակ, ազգական, թոք և ուղեղ մաշելով, գրա-
սեղանի առջև անքուն գիշերներ է անցնում.
հանգիս է հանում մեր լացն ու հառաչանքը.
խնամատար մօր հոգատարութեամբ սպեղանի է
դնում մեր վերքերին: Նրան ոգեւորում է ապա-
գան. նա խրախոյս է որոնում չըջապատում.
բայց թէ առաջվում և թէ վերջինը նրանից երես
են դարձնում: Անխիղճ կերպով նա հալածվում է.
ւախքով, լաւատուած և զիւսախաբված է յայ-
տարարվում, նա երկար չէ դիմանում. իր դրօ-
շակն ամուր բռնած, դեռ շատ սուրբ մտքեր
սրտի խորքում թաղված ընկնում է դաշտի մէջ,
ճանապարհի կիսին:

Այս մի երրորդն էլ, անվեհեր սրտով կուսցնում
է իր ուսը մանուկ սերնդի կրթութեան ծանր
խաչի առջև և քրտինքը ճակատին, հաստատուն
բալետով առաջ է դնում: Փոշու ու տոտասակ նրա
ծաղրին են հանդիպում. տարիների ձախարհու-
թիւնը կեանքի անշնան կատակներ են թվում. նա
իրան մոռացած, խորտակվում է ամեն տեսակ ար-
դիւք: Նա յուսով է, որ աշխատանքի պոտենցիալի
տի մայելէ: Բայց ահա նա ծերանում, ալեգորդ-
վում է. նախկին խանդն ու եռանդը զգալի չէ
պով պակասել են. նա չէ կարողանում այլ ևս
աշխատել, նրան հանգիստ է հարկաւոր: Դժբաղ-
դաբար, նա կամ անպէտք լաթի նման մի կողմն
չարտվում, կամ այս կամ այն տեսչի ու առաջ-
նորդի ձեռքում խաղալիք դարձած անիծում է այն
օրը, երբ ոտք դրեց այդ իր համար նուիրական աս-
պարէզը. կին ու որդիք քաղցած են, իսկ ինքը
յուսահատված: Այդպէս դերեղման է իջնում,
անօգնական, իսկ ընտանիքն օգնութեան ձեռք է
կարկառում...:

Մինչդեռ անձնուրաց գործիչներն այսպէս տանջ-
վում ու մեռնում են, այստեղ կամ այնտեղ մի
քանի վնասակար մարդիկ, անկուշտ աղբուկներ
այս կամ այն հաստատութեանը, դպրոցին պիտի
կպած ծծում, սպառում են նրա կենսական ու-
ժերը, աւերում են նրա հիմքը:

Ամօթ է վերջապէս:

Թ. Սէ:

«ԱՄՈՒՍԻՆՆԵՐ» ՌՈՒՍԱՅ ԲԵՄԻ ՎՐԱ

Ապրիլի 21-ին, Թիֆլիսի արքեպիսկոպոս թատրո-
նում, ուսուցա դրամատիկական խումբը ներկայաց-
րեց մեր ծերունի դրամատուրգ Գ. Սունդուկեանի
«Ամուսիններ» կոմէդիան:

Այդ պիտանի մասին ընդհանրապէս, և հայոց բն-
մի վրա նրանք կարողանան մասին մասնաւորապէս
«Մշակի» մէջ իր ժամանակին մանրամասն քնն-
նախադրութիւնն է տպագրելու: Ուստի մենք այժմ
կը բաւականանանք արձանագրելով այն տպաւո-
րութիւնը, որ թողել է «Ամուսիններ» ներկայա-
ցումը ռուսաց բեմի վրայ:

Ահա, ամենից առաջ, մի ինտելիգենտ հայի
կարծիքը, որը «Ամուսիններ» պիտանա առաջին
անգամն է տեսել ռուսաց բեմի վրայ:
«Ամուսիններ» այդ պիտան մի վերջապահ հեղի-
նակութիւն, այն էլ իբրեւ թէ տեղական
կ և անքից, անկարելի է: Աւելի ճիշդ կը լինի
ասել, որ այդ պիտան ներկայացում է հինգ ա-
ռանձին-առանձին տեսարաններ կեանքի այն ծա-
նըր դրամայից, որ ներկայացնում է ամուս-
նական հարցը մեր ինտելիգենտ հասարակու-
թեան մէջ: Հիմարիտ, խնջոք, լուսաւորված,
բայց անբաղդ կրնը, անբարոյական, անկիրթ,
կոպիտ, ոչինչ սրբութիւն չը ձանաչող մարդուց
աղապկեւո՛ւ համար տանջվում է և ոչինչ ելք չէ
գտնում այդ սարափիկի դրութիւնից... չը նայե-
լով, որ այդ աղապկեւո՛ւ խոտանում է նրան
խակական բաղդաւորութիւն՝ իր մանկութեան
սիրելի ընկեր, զինուորական Արեմինի հետ, օ-
րինաւոր ամուսնութեան մէջ:

Մի կողմից հասարակութեան խիստ, անարդար
վերաբերմունքը դէպի անբաղդ կրնը, միւս կող-
մից ոտակակեւո՛ւ իրան անհաղար պահանջները—
անբարոյական ամուսնուց վկայական ունենալ՝
առանձին կեանք վարելու համար,—դժոխային
տանջանքներ են պատճառում համակրելի տիկնոջը:
Այդպիսի վկայական անկիրթ ամուսինը համաձայն-
վում է տալ, եթէ կենը ստորագրէ իր մեղաւո-
րութեան թուղթը (ոչինչ մեղք չունենալով):
Այդ թուղթը տիկնոջ չէ ստորագրում և այդ
պատճառով էլ հարկաւոր վկայականը չէ ստա-
նում... Եւ ասա, տիկնոջ համար օրինաւոր աղա-
տութիւն ձեռք բերելու համար հանդէս է գա-
լիս վերոյիշեալ զինուորական օֆիցէր՝ Արե-
մինը, որը սիրահարված է տիկնոջ վրայ: Նա կա-
մնում է օրինաւոր կերպով պատկեր, բայց ելք
չը գտնելով՝ անհետանում է, բայց անհայտն է,
որ ինքը չի վերադառնալ, մինչև որ չը ստանայ
տիկնոջ աղապկեւո՛ւ և իրանց միասնալու իրա-
ւունքը: Եւ իրաւ, անհետանում է այդ պարտնը և
գրանով էլ պիտան վերջանում է...

Երբ վարադրել իջաւ, թատրոնի հասարակու-
թիւնը չէր կամենում հաւատալ, որ պիտան ար-
դէն վերջացաւ և սպասում էր շարունակութեան,
որը սակայն չը կար...

Այո, «Ամուսիններ» չէ վերջացրած: Առանձին
պատկերները երկրորդ, երրորդ և չորրորդ գործո-
ղութիւններում, մասնաւոր դրանց մի քանի կը-
տորները հիմաւի էին, բայց դրանց մէջ հարկա-
ւոր կապեր ստեղծելու, կիսատ պատկերները լը-
րացնելու, և վերջապէս, իբրեւ բեմական մի դը-
րումաճը, «Ամուսիններին» վերջ տալու համար—
հարկաւոր է նոր, առանձին աշխատութիւն:

Պէտք է ասել, որ չորսնալի դերասանների ար-
ժանաւորութեան և խաղին պէտք է վերադրենք
պիտանի մի քանի պատկերների յաջողութիւնը:

Գլխաւոր դերերը կատարում էին՝ Յովհաննիս,
Ստեպանով, Ժորժով, Մարտինով, Լոդին
և Սորոգոնով: Հասարակութիւնը ծափահարու-
թիւններով վարձատրեց թէ դերասաններին և թէ
հեղինակին, որը մի քանի անգամ երեսաց բեմի
վրայ:

Ահա տեղական ռուս լրագրիւնների կարծիքը:
«Нов. Обозр.» ասում է. «Առաջին անգամ ռու-
սաց խումբը ներկայացրեց Գ. Ստեղծականցի
«Ամուսիններ» յայտնի դրաման: Ռուս հասարակու-
թիւնը տեղական դրամատուրգների գրածներին
հետ ծանօթացնելու գաղափարը անկասկած դեղնելի
է և մնում է միայն շնորհակալութիւն յայտնել
մեր հիւրերին մի այդպիսի օգտակար գաղափա-
րին համակրութեամբ վերաբերվելու համար:

Բայց պիտան ընտրութիւնը չը գոհացրեց
հանդիսատեսներին: Հեղինակը, ճիշդ է, շօշափել
է այդ պիտանում մի հետաքրքիր մոմէնտ ժամա-
նակակից հայ նահապետական ընտանիքի կեանքի
մէջ, մի մոմէնտ, երբ այդ ընտանիքի հիմունքները
չեն կարողանում տանել նոր գաղափարներ և երբ
նրա մէջ թափանցում է, թէպէտ և շատ տարա-
կան ձևով, հասկացողութիւն ապահարդան մա-
սին, որպէս ընական ելք ընտանեկան դժուարու-
թիւններին: Սակայն տաղանդաւոր դրամատուրգը

իր այդ մտադրութիւնը չէ արտայայտել իր սովոր-
ական արուեստագիտութեամբ: «Ամուսիններ»
մէջ չենք գտնում ոչ մէկը այն բաղմամբ արժա-
նաւորութիւններից, որոնցով այնպէս հարուստ
են նոյն հեղինակի ուրիշ պիտանները՝ «Պէպո»
«Խաթաբա» և այլն: Մենք այստեղ չենք լսում
ոչ Չամբասովի կամ Ջիվիովի ընտրութիւն լը-
րուն, ոչ էլ Գիլբերտի կամ Խալուս անսպասելի խ-
մբը, չենք տեսնում ոչ համարձակ շտրիկներ
տիպերի ստեղծագործութեան մէջ, ոչ էլ տեղա-
կան կեանքի կենցաղավարական յատկութիւնները:

«Кавказ» լրագրիւն ասում է.—«Ստեղծականցի
«Ամուսիններ» «կոմէդիան» մի չափազանց թույլ,
երկարալից միամիտ գրութեաճ է, որը սովորա-
կան հանդիսատեսի մէջ, որ չէ վարակված տե-
ղական աղապկեւո՛ւ իրան, միայն տարակուսանք
կարող է առաջացնել: Շատ կարելի է, հայերէն
լեզուով նրա մէջ այնքան զգալի չեն դիտանանքները,
բայց ռուսերէն մի իսկ ռուս լեզու մէջ (և ոչ
թէ թարգմանութեան մէջ, որովհետև գործող ան-
ձինք ռուսական անուններ են կրում)՝ այդ «կո-
մէդիան» կատարելապէս մի անմարտելի բան է:
Չը նայելով այդ բոլորին, հեղինակին քաջալերե-
լու փորձ եղաւ, և 3-դ ու 4-դ գործողութիւնների
անտարկտում, երբ հասարակութեան մի մասը
թողեց դաշիճը, նրա միւս մասը, զուրկ ունե-
նալով թատրոնական վերնահարկի բնակիչներին,
բարձրաձայն բեմ դուրս կանչեցին պ. Ստեղծական-
ցին: Սակայն, կարծում ենք, դրանով վատ ծառա-
յութիւն մատուցին հայոց դրամատիկական արուես-
տին, ինչպէս և պիտան ռուսերէն փոխադրելով և
ռուսաց բեմի վրա դնելով: Այդպէս է, գոնէ,
թատրոնում ներկայ եղող մի քանի ինտելիգենտ
հայերի կարծիքն է:

«Тифлискій Листок», խոսելով «Ամուսիննե-
րի» մասնակցողների մասին,—պիտանի վերաբեր-
մամբ ոչինչ չէ ասում:

Այսպէս ուրեմն «Ամուսիններ» ռուսաց բեմի
վրա աջողութիւն չունեցաւ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ապրիլի 24-ից «Ռուսաց գործակալութեան»
միջոցով, Պետերբուրգից ստացանք հետեւեալ հե-
ռագիրը. «Թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա Ֆե-
դորովնայի անուանակոչութեան առիթով, Յար-
կո-Սելժի պալատի մեծ եկեղեցում հանդիսաւոր
պատարագ մատուցվեց թագաւոր Կայսրի, Մա-
րիա Ֆեդորովնա և Ալեքսանդրա Ֆեդորովնա
Կայսրուհիների, Մեծ Իշխանների և Մեծ Իշխա-
նուհիների ներկայութեամբ: Ալեքսանդրովնան
պալատում կայացաւ ընտանեկան նախաճաշ:

Կերակրի, ապրիլի 23-ին, Նորին Կայսերական
Մեծութիւն թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա Ֆե-
դորովնայի անուանակոչութեան օրը, քաղաքը վաղ
առաւօտից դարձաւ զրոյշանալով: Եկգարին
եկեղեցում, պատարագից յետոյ, հանդիսաւոր մաղ-
թանք կատարվեց: Մաղթանքը ժամանակ թողա-
նով 21 անգամ արձակեցին: Մաղթանքին ներ-
կայ էին՝ Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ
Իշխան Նիկոլայ Միկայլովիչ, Կովկասի կառա-
վարապետ գեներալ-ադմիրալ Գերմանով, կա-
ռավարչապետ օգնական կոմս Տատարչիկ, սենա-
տոր Կոնի, Թիֆլիսի նահապետապետ իշխան Դեր-
վաշիճէ, բաղմամբ գեներալներ, կառավարչական
և հասարակական հիմնարկութիւնների ներկայա-
ցուցիչներ և բազմաթիւ ժողովուրդ: Նոյն օրը
հայոց վանքի մայր եկեղեցում Թիֆլիսի թեմի
առաջնորդ ամբողջ հայ հոգեւորականութեան
հետ միասին, պատարագից յետոյ նոյնպէս մար-
թանք կատարեց: Մաղթանքին ներկայ էին Ներ-
սիսեան և ուրիշ հայոց գաղթողների աշակերտնե-
րը և բաղմամբ ժողովուրդ: Մաղթանքներ կա-
տարվեցին նոյնպէս կաթոլիկ և բողոքական եկե-
ղեցիներում, մեղիկներում և հրէական սինագո-
գներում: Ներկայեան քաղաքը լուսաւորված էր:

Երէկ, ապրիլի 24-ին, ստացանք Վիեննայից,
Տիգրան Նաղարահանից, հետեւեալ հեռագիրը.
«Ներկարատե տեսակցութիւն ունէի «Fremden-
blatt» և «Presse» լրագրիւններ խմբագիրների
հետ: Կ. Պոլսից «Presse» լրագիրը այս րօպէս
տեղեկութիւն ստացաւ, որ սուլթանը ընդունեց
հինգ նահանգների ինքնավարութեան ծրագիրը:
Վաղը կը հրատարակվի «Presse» լրագրում:

Մեզ հեռագրում են Վիեննայից, ապրիլի 21-ից
հետեւեալը. «Կ. Պոլսից հեռագրում են այստեղի
լրագրիւններին, որ ապրիլի 20-ին Կ. Պոլսի հայոց
թաղում այրվեց 150 տուն»:

Երէկ, ապրիլի 24-ին, Թիֆլիսի քաղաքային
դռման, 54 ձայնով ընդդէմ 9-ի, քաղաքապետի
ընտրեց իշխան Ն. Արզումանյան-Ներկայաբաղմուն:

Մեզ գրում են Բերլինից, որ մայիսի սկզբնե-
րին, Բերլինի Աշխարհագրական ընկերութեան ժո-
ղովում, ընկերութեան հրաւերով, պրոֆէսոր Արծ-
րունի պէտք է կարդայ մի դասախոսութիւն այն
ճանապարհորդութեան մասին, որ նա կատարեց
Անդրկովկասում, անցեալ 1894 թւի ամառը:

Կովկասի գինեգործների, օղեգործների և նաւ-
թագործների ուշադրութիւն ենք դարձնում մի
ցուցահանդիսի վրա, որ պէտք է տեղի ունենայ
նրկայ 1895 թւին Փրանսիական Բորդո քաղա-
քում, և կը շարունակվի մայիսից մինչև նոյեմ-
բեր ամիսները: Բորդոյի ռուսաց հիւպատոսը Գիւ-
ղաստեսական ընկերութեան միջոցով գիտնելով
մեր արդիւնաբերներին՝ հրաւիրում է մասնակցել
այդ ցուցահանդիսին, ուղարկելով զինի, օղի,
սպիրտ, հացահատիկներ և նաւթ: Նախօրը մաս-
նամասն տեղեկութիւններ ստանալով՝ ցանկացող
ները կարող են գիտնել Բորդոյի ռուսաց հիւպատո-
սին այս հասցեով. Au Consulat Imperial de Rus-
sie à Bordeaux France, իսկ նամակները կարելի
է գրել ռուսերէն: Պարզե ստացողները իրաւունք
կունենան իրանց առևտրական թղթերի և նշա-
նակների վրա տպել և նկարել տալ իրանց ստա-
ցած մրցանակները:

Կերակրի օր, ապրիլի 23-ին, ռուսաց դրամա-
տիկական խումբը ներկայացրեց առաջին անգամ
«Կլաւդիա դը Արամոն» դրաման, հեղինակու-
թիւն Կորմենիովսկու: Գրամայի նկարը վերցրած
է սպանիական կեանքից: Ճշմարիտ է, այդ դրա-
ման յիշեցում է Փրանսիական սովորական մեղ-
դարմները, բայց ժամանակակից թատրոնական
անշնորհ, անհամ, միատեսակ ընդհանրաւոր միջ-
պատմական կեանքից վերցրած պիտանները, ինչ-
քան էլ նրանք պակասութիւններ չունենան, հան-
դիսականին դրամում են և տեղափոխում մի բո-
լորովին օտար աշխարհ, և մարդ ռուսական
է հետեւում բեմի վրա կատարվող գործողութիւն-
ներին: Գլխաւոր հերոսի՝ Դոն Բոլդրիգո Սանդովա-
լի դերը Լիւդվիգով կատարեց չմտքով և աջողու-
թեամբ վատ չէին և տիկին Սալմանա՝ իդարել-
լայի դերում, որի անսխալ ձայնը, սակայն,
չառ է վնասում նրա խաղի տպաւորութեան, և
դերասան Ստեպանով: Այդ երկուսի մենք առաջին
անգամ տեսանք հայ դերասան Պետրոսեանին,
(որի միւս եղբայրը հայոց բեմի դերասան Պե-
րոսեանն է), որը սովորաբար խաղում է Մոսկ-
վայում, ռուսաց խմբի մէջ: Դոն Պեդրո դը Արա-
մոնի փոքրիկ, բայց զեղեցիկ դերը Պետրոսեան
կատարեց մեծ ճաշակով և արժանացաւ ծափա-
հարութիւնների թատրոնը իր չէր:

Թիֆլիսի հասարակութիւնը երկար սպասեց
հոչակաւոր Մաղինիին.—նա վերջապէս այսօր
գալու է, և վաղը, չորեքշաբթի օր, բանկի թա-
րոնում երևելի տեսօրի առաջին կոնցերտն է:

Մեր լրագրի անցեալ համարի մէջ տպած՝ «Ա-
րարաւոր» երկնաւորի ձեռքում յօդուածում մի
սխալ է մտել. փոխանակ տպելու՝ խոջայանի
մահվան մասին չէ յիշված «Արարաւոր» փետրվա-
րի և մարտի համարներում, տպած է՝ մարտի և
ապրիլի համարներում: Այդ ամսագրի ապրիլի
համարը մեր ձեռքը դեռ չէ հասել: Ի դէպ, վատ
չէր լինի, եթէ «Արարաւոր» խմբագրութիւնը իր
այդ «երկնաւոր» սխալը ուղղէր գէթ ապրիլի
համարում: Լաւ է ուշ, քան երբեք:

Կերակրի, ապրիլի 23-ին, Թիֆլիսի Գիդուրէ
կոչված հրապարակում տեղի ունեցաւ այս տար-
վայ առաջին ձիարշաւը: Ժամը 2 1/2-ին, կառա-
վարապետի օգնական կոմս Տատարչիկի, ձիաբու-
ժական ընկերութեան անդամների, Գիւղաստես-
ական ընկերութեան ներկայացուցչի և բաղմա-
թիւ հասարակութեան ներկայութեամբ բացվեց
ձիարշաւը: Նշանակված էր երեք մրցանակ երեք
խումբ ձիերի համար: Ինչպէս անցեալ տարինե-

րը, այս տարի էլ Հիւսիսային Կովկասի կայաւա-
ծածներ իշխան Տուգանովի ձիերը առաջին տեղն
էին բռնում իրանց արագընթացութեամբ: Բաւա-
կան առաջադիմութիւն են արել և Գանձակի նա-
հանգի կայաւածատէր Զիւլադաբովի ձիերը: Հե-
տեւեալ ձիարշաւները նշանակված են ապրիլի
30-ին և մայիսի 7-ին:

ՅԱՐԱԿԻ-ԿՈՒՄԻՏԻՅ մեզ գրում են. «Այս օ-
րերս մեզ մօտ տեղի ունեցաւ երկու ցաւալի
անցք: Երկու ռուս մանուկներ խաղալիս այնքան
հրապուրվում են, որ նրանցից մինը՝ տղան վեր է
առնում քար և խփում է միւսի՝ աղջկայ ծոծրա-
կին: Աղջկայ փոքր ուղեղը սաստիկ վնասվում
է, որից շուտով նա մեռաւ: Միւս դէպքը հետե-
ւեալն է: Մի պալա Նովի Դերակից գալիս է այս-
տեղ և անձնատուր է լինում դուրսնութիւննե-
րին: Մի քանի օրից յետոյ հովիւր անձնատա-
նութիւն է գործում՝ գալոյնը խրկելով կո-
կորդը: Անձնատանութեան պատճառները դանա-
ղան կերպով են բացատրում:

ԴԱՎԱՆՈՒ գիւղից մեզ գրում են, թէ և մի
փոքր ուշ, հետեւալը. «Մարտի 18-ին, Գրիգոր
Լուսաւորչի տօնի օրը, այստեղ հոգեհանգիստ կա-
տարվեց Լևոն վարդապետ Խոջայանի յիշատա-
կին»:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ՀԱՅ ՀԱՐՑԸ ԾԱՂԱՅԱԿՆ ԹԵՐԹԵՐՈՒՄ

Խաղալի Բոլոյնը քաղաքում հրատարակվող
«Le Perroquet» (Թուխ) ծաղկական թերթը
տպել է մի կարրիկատուրա հայոց հարցի առի-
թով:

Այդ պատկերը ներկայացնում է զատկական
սեղան, վրան պատեց դրած, որի շուրջը բոլոր-
ված նստած են տիկնիկներ, որոնցից իւրաքան-
չիւրը ներկայացնում է եւրոպական մի պետու-
թիւն: Այդ տիկնիկներն են՝ Ֆրանսիան, Անգլիան,
Իտալիան, Աւստրիան, Գերմանիան, և Սլաւոնաւ:
Սեղանի առջև, երկու յետին թաթերի վրա կանգնած
է մի դուռնի կապած արջ, որ Հայաստան է ներ-
կայացնում, որին փայտը ձեռքին խաղացնում է
մի թիւրք: Երբ թիւրքիս է ներկայացնում: Թիւր-
քի ետեւ կանգնած է մի օտարօրիկ և զլլոյն
չալմա փաթեթած թիւրք զինուոր, որը թմուկը
ձեռքին և փողը բերանին՝ փչում է:

Արջի ետեւից կանգնած է Հոսիսի պապը, թիւր-
քական չոր հագած և չալմա փաթեթած զլլոյն,
ու նայում է արջի խաղին: Տիկնիկներն ևս նայում
են արջին: Սեղանի մի կողմը զրկած է մի ծածկ-
ված սափոր՝ վրան գրված «Արեւելեան հարց»
խօսքերը: Սեղանի դիմաց զրկած է մի կշեռք՝ ծայ-
րին կիսալուսնակ, որի վրա բաղմած է բիւզան-
դական արծիւը: Ահա այդ է պատկերի բովան-
դակութիւնը:

Այդ ծաղկական թերթի առաջին յօդուածը,
խօսակցութեան ձևով, վերաբերվում է հայերին,
և կրում է հետեւեալ վերնագիրը. «Ոչինչ այնքան
անտանելի չէ, որքան սպասելը, խօսակցութիւն
հայի և թիւրքի մէջ:

Հայ.—Օգնութիւն, օգնութիւն:
Թիւրք.—Լուր, թէ չէ աւելի վատ կը լինի:
Հայ.—Ամենեւին չեմ լուի:
Թիւրք.—Սրբեղ ցցի վրա կը բարձրանան:
Հայ.—Եթէ դու կարողանայիր, վաղուց այդ-
պէս կը վարվէիր:

Թիւրք.—Լուր, դու:
Հայ.—Ոչ, ամենեւին չեմ լուի:
Թիւրք.—Գո աղաղակները սակայն անօ-
գուտ են:

Հայ.—Մի մարդ կը դալ:
Թիւրք.—Ամենեւին մի յուսա:
Հայ.—Ես դրանում հաւատացած եմ:
Թիւրք.—Սկային բաւական երկար ժամա-
նակ է, որ դու սպասում ես ըստ բարեկամների...
Հայ.—Ինչ փայլ, ես ամենեւին յոյսս չեմ
կորցնում:

Թիւրք.—Բայց ըստ սպասելիքի, իմ դաւադանին
տակ, շատ էլ դուրեկան չը պէտք է լինի: Երեւ
համար:

Հայ.—Ես համաձայն եմ, բայց այն ևս ճիշդ
է, որ ըստ աւելի էլ վատ է:
Թիւրք.—Լուր, քեզ ասում եմ:
Հայ.—Ոչ, դու կարող ես կրկնել հարուածները,
բայց ես միշտ կը կրկնեմ...

Թիւրք.—Վերջապէս կը լուսն թէ չէ:
Հայ.—Բեւեղ սպասում է դերեղմանափոքը:
Թիւրք.—Ոչ...
Հայ.—Ես այդ տեսնում եմ, դու դողում ես
վախից...

Թիւրք.—Դու ուտ ես խօսում:
Հայ.—Իմ սպասելը սարսափելի է, բայց ես
սպասում եմ իմ յաղթանակին...

Թիւրք.—Գո աղաղակներ...
Հայ.—Քոնք աւելի էլ վատ է, որովհետև դու
սպասում ես ըստ անցադրին... հին շորեղներին
խանութի համար:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 21 ապրիլի, Հինգշաբթի, Պետրոպոլիսի տաճարում կայացրել են Միջին Պետրոպոլիսի համար տեղի ունեցած հոգեհանգստին, ներկայ էին թագաւոր Կայսրը, թագուհի Կայսրուհի Մարիա Ֆեոդորովնան, Մեծ Իշխանները և Մեծ Իշխանուհիները: Հոգեհանգստը աւարտվելուց յետոյ, Նոյս Մեծաթիւնները գնացին Անիպոլ պալատը:

ՄՍՍԿՎԱ, 21 ապրիլի: Մի անձանոթ բարեգործութեան ուղարկելի Մասկովայի համայնաբանը 4000 ռ. վճարելու համար չբաւար տեսնողներին պահանջվող գումարը, դատաւարութիւններ լսելու համար:

ԼՈՆԴՈՆ, 20 ապրիլի: Պէկինից հաղորդում են, որ չինական կառավարութիւնը դեռ ևս ոչինչ չէ կայացրել Սիմոնսեկի դաշնագրեր վաւերացնելու վերաբերմամբ: Բողոքիսանը ընդունեց Լի-Խու-Զանցին:

ՊԱՐԻՋ, 20 ապրիլի: «Matin» լրագիրը հաւատացնում է, որ իրր թէ եսպոնական կառավարութիւնը համաձայն է բանակցութիւններ սկսել Ռուսաստանի, Գերմանիայի և Ֆրանսիայի հետ արեւելեան-ասիական հարցը կարգադրելու համար:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 22 ապրիլի: Ռուսական կայսրը Յարսիսե-Սկրոմ ընդունեց գերմանական նոր զենացան իշխան Բադենսկին, որը յետոյ ներկայացաւ թագուհի Կայսրուհուն:

ՕԴԵՍՍԱ, 22 ապրիլի: Գիշերը Բալայովի և Գալիբի մէջ չէրնամորեան-դոնական ընկերութեան «Բոլցարիա» նաւը ընդհարվեց գերմանական մարդատար «Յրիդէ» նաւի հետ, որը դէպի յատարը գնաց: Հանապարհօրէնքներ և նաւատարները փրկված են:

ՊԱՐԻՋ, 21 ապրիլի: Հաւատացնում են, որ Ալանիան միանում է Ռուսաստանի, Ֆրանսիայի և Գերմանիայի բողոքին Սիմոնսեկի դաշնագրի դէմ: Բանակցութիւնները շարունակվում են:

«Կէօնի» լրագիրն: Սփիւռնից հաղորդում են, որ այն պատրաստվում է իրր թէ Մակեդոնիայի բրիտանական ազգայնականութիւնը պատրաստվում է անջատարկել թիւրքերի դէմ, Պրիլպուտ, Օն-րիդում և Վէլեուտ կառնաւորված են շատ անձինք, որոնց թիւում և բողոքները:

ԼՈՆԴՈՆ, 21 ապրիլի: «Times» լրագիրը հաղորդում է, որ Եանգլիայի ստացված տեղեկութիւնների համաձայն, շատ բարձրասիւձան աստիճանաւորներ յորդորում են բողոքիսանին վճարել Եսպոնիային աւելի խոշոր պատերազմական կոնտրիբյուցիա, քայքայ չը դիմանել Մանչուրիան և Ֆորմոզան:

«Բէյթերի» գործակալութիւնը: Պէկինից հաւատացնում են, որ իրր թէ բողոքիսանը վճարեց հաստատել խաղաղութեան դաշնագրերը, և այդպէս վարվել համոզեց նրան կրկին արտաքին գործերի մինիստրի պաշտօնը ստանձնող պրինց Կոնգը, որը խաղաղութեան յայտնի կողմակից է:

Ֆինանսների մինիստր Հարկոտ յայտարարեց համալսման ժողովում իր հրաժարական տալու հնարաւորութեան վրա: Այդ յայտարարութիւնը, ասում են, կայ ունի նոյնպէս լորդ Բոգբերիի հրաժարական տալու հետ:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 23 ապրիլի: Այսօր, թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա Ֆեոդորովնայի անուանակոթիւն են օրը, մողթներ կատարվեց խալիէվան տաճարում, պալատականների և իշխանութիւնների ներկայութեամբ: Պետերբուրգը զարդարված էր դրոշակներով: Երեկոյան լուսավառութիւն կը լինի:

Բուխարական էմիրը Տերէկի կողակերի գործից օգնելի մէջ է մտցրած, գնեցելով լէյտենանտի աստիճանով:

«Нов. Время» լրագիրը հաղորդում է. «Շաբաթ պետական խորհրդում ընկնում էր իրական ընկական ինստիտուտի բացման հարցը Պետերբուրգում: Կատարելա ճամակութեամբ վերաբերվելով ինստիտուտի հիմնարկութեան անհրաժեշտութեանը, ժողովը քննեց նախագիծ մանրամասնութիւնները, և նախագիծը չորսամսայ դասաւորութեան փոխարէն անհրաժեշտ համարեց հնգամսայ դասաւորութիւնը: Ինստիտուտը կը գտնվի ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան իրաւասութեան տակ:

ԱՍՏՐԱԽԱՆ, 23 ապրիլի: Մակովայում թագաւոր-խաղաղարարի արձանը կանգնեցնելու համար ստացվել է 3,696 ռ., որոնց թիւում 1,477 ռ., որ ժողովել են գիւղացիները:

ԼՈՆԴՈՆ, 22 ապրիլի: Լավում է. որ Բոգբերիի զիտաւորութիւն ունի թողնել առաջին մինիստրի կոչումը:

Հաստատվում է, որ բողոքիսանը ստորագրեց Սիմոնսեկի դաշնագրերը: Լի-Խու-Զանց ճանապարհ է ընկնում Չիֆու փոխանակելու եսպոնական լիազօրների հետ վաւերացրած դաշնագրերը:

ԼՈՆԴՈՆ, 22 ապրիլի: «Daily News» լրագիրը յայտարարում է, որ Բոգբերիի առաջնկայ հրաժարականի լուրը վաղաժամ է: Լորդերի և համայնքների ժողովները չեն ալ ձայնակել:

ՎԻԵՆԱ, 22 ապրիլի: Աւստրո-Ունգարիայի

արտաքին գործերի մինիստր Կարնիկ հրաժարական տուեց՝ ունգարական մինիստր-նախագահ Բանֆիի հետ ունեցած ընդհարման պատճառով, եկեղեցական քաղաքական հարցերի վերաբերմամբ: Հնարաւոր է նոյնպէս Բանֆիի հրաժարականը:

ԲԵԼԳԻԱ, 22 ապրիլի: Սկուպչինան մերժեց փոխառութեան վերաբերեալ օրինակներ, սակայն մի վճիռ կայացրեց, որի միտքն այն էր, որ ֆինանսական օրինագծի մերժումով ամենին չէ պակասում վստահութիւնը դէպի կառավարութիւնը: Նոյնպէս վճիռվեց տարեկան 480,000 ֆրանկ թոշակ տալ Միլանին: Միլան ճանապարհ ընկաւ դէպի Լուալիա:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ

Ապրիլի 21-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ	93	Ր. 20 Կ.
Բերլինի վրա 100 մարկ	45	525/8
Պարիզի վրա 100 ֆրանկ	36	85
Ռսկի	7	43
Մարսայի կոպոններ	148	50
Արծաթ	—	—
Բորսայի գիւլյոն	5	70/0
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի	—	—
— — — — — 2-րդ	—	—
— — — — — 3-րդ	—	—
4% պետական ընկառ	99	25
5% ռուկայ ընկառ 1894 թ.	164	—
Արեւելեան 5/0 փոխառ. 1-ին շրջ.	—	—
— — — — — 2-րդ	—	—
— — — — — 3-րդ	—	—
— — — — — 4-րդ	—	—
Ներքին 5% առաջին փոխառութ.	236	—
— — — — — երկրորդ	225	—
5% պետական երկամս. ընկառ	102	—
4% ներքին փոխառութեան	981/8	—
4 1/2% զրաւ. թղթ. ագն. կալ. բանկի 1015/8	—	—
Ագն. կալ. Պետ. բանկի խաղաղութ.	—	—
Գրաւ. թղթ.	210	50
4 1/2% վկայ. դիւլ. հող. բանկի.	1015/8	—
4 1/2% զրաւական թղթեր կալաւ.	—	—
Փոթ. կրեդիտ. ընկեր. մուտ.	150	—
— — — — — թղթաւ.	—	—
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.	101	50
Ընկերութեան օրինաւորներ	101	50
Մակովայի քաղաք. օրինաւորներ	100	25
Օղէսայի	995/8	—
Թիֆլիսի	101	—
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի	101	—
— — — — — Բուխարի	101	—

ԽՐԱԳԻՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ԼՈՆԴՈՆ, Գ—Պ. Չեր առաջին երկու նամակը չեն ստացել: Բարեհաճեցէք ձեր նամակները պատուիրած անել, որպէս զի ապահով հասնեն մեզ:

Կ. ՊՈԼԻՍ. Մ. Ստացանք ձեր վերջին նամակը: «Մշակի» մուտքը արգելված է Թիւրքիա, և այդ պատճառով ձեր բոլոր համարները յետ են ուղարկվում Թիֆլիս:

ՄՍՍԿՎԱ. Հայ ուսանողներին. Չեր ուղարկած 25 բուլլին, համաձայն ձեր ցանկութեան, յանձնեցինք ձեռնարանի նախկին աղքատ աշակերտներին:

ԽՐԱԳԻՐՈՒ ԱԼԵԿՍԱՆԴՐ ԲԱԼԱՆՔԱՐ ՀՐԱՄԱՐԱԿԻՆ՝ Մ. ՄԷԼԻԲ-ԱՂԱՍԱԼԱՆԷ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
Ա. ԲԱԼԱՆՔԱՐԻ
ՍԱՍՈՒՆ
Գրքովը աշխարհաբան քարտէզով:
Գինն է 20 կոպէկ:
Վաճառվում է «Մշակի» խմբագրատանը և Կենտրոնական գրավաճառանոցում:
(№ 39) 4—10

Լոյս տեսաւ
ԱՆՓՈՐՁ ԳԵՌԻ
«ՎԱՐԴ Ե ՍՈՒԱԿ»
(տանաւորներ)
Գինն է 30 կ:
Գինը Կենտրոնական գրավաճառանոց:
(№ 43) 3—6

Կենտրոնական գրավաճառանոցում վաճառվում են
ԼԵՌՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՆԵՐ
1. ԱՅՅ ԹԻՐԻՐԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ 60 կ.
2. ԺՈՂՈՎԴԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ 20 կ.
10—10

ԿԱԼՈՒԾԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԹԱՏՐՈՆ
Չորեքշաբթի, ապրիլի 26-ին
ԿՕՆՑԵՐՏ
Աշխարհում միակ հռչակաւոր տէնօր
ԱՆՃԵԼՕ ՄԱԶԻՆԻ
Սկիզբը 8 1/2 ժամին երեկոյան:
Միացած տոմսակները կարելի է ստանալ Բ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ երաժշտական մագաղիսում, Գօրցօվայա փողոցի վրա:
1—1

Երեքշաբթի, ապրիլի 25-ին,
ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԴԱՀԻՃՈՒՄ
Ժողովարանի անդամների և կանդիդատների համար լինելու է կոնցերտ կոյր պիանիստ
Ն. Թ. ՏԻԳՐԱՆԵԱՆՑԻ
Եւ Հովակահար Մ. Տ. ՎԱՍԻԼԵՎԻ
Կոնցերտի պրօգրամը կազմված կը լինի գլխաւորապէս արեւելեան եղանակներով
(№ 44) 2—2

Հուսով լոյս կը տեսնի
ՍՈՒԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ
անունով ազգային լիակատար երգարանի առաջին հատորը, չորսօրեց տպագրութեամբ: Այս հատորի մէջ, բացի բոլոր գործածական և ժողովրդին յայտնի երգերից, տպագրվում են նոյնպէս և նոր երգեր, և բանաստեղծութիւններ, և երգերն վերաբերեալ արձակ գրութեան, թւով 300-ից աւելի:
Չը նայելով գրքի մեծութեանը, իւրաքանչիւր օրինակի գինը նշանակում ենք, կ'անկի Վճարող բաժանողը բաժանողը թող բարեհաճեն դիմել Բագու, Սոխաի՝ Օտարաբաղաբան ցանկացողները թող բարեհաճեն դիմել Բագու, Սոխաի՝ Տրատարակին՝ այս հացեղով: священнику Григорию Григорянцу, въ БАКУ.
Հրատարակիչ՝ Գրիգոր քահանայ Գրիգորեանց
(№ 44) 2—3

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՍԱՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԿԱՐԶՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ ընկերութեան կանոնադրութեան § 31 համաձայն, ապրիլի 30-ին, կ'երկոյան ժամի 7 1/2-ին, Թիֆլիսի քաղաքային դոմայի դահլիճում նշանակված է ընդհանուր ժողով, որի պարագայում ընդհանուր անդամներն ա. տեղեկագրի, հաշուի և նախահաշուի ընթերցումը և հաստատումը, բ. պաշտօնական անձերի ընտրութիւնը, վարչութեան նախագահի, փոխ-նախագահի, մի անդամի, գրատաճի և խմբագրական մասնագործի երեք անդամներին:
Վարչութիւնը ընդ սմին հարկ է համարում յայտարարել, որ վարչական վերջին նիստը նշանակված է ապրիլի 29-ին, շաբաթ օր, երեկոյան, և մինչև այդ նիստը միայն կը լինի այն նոր անդամների ընտրութիւններ, որոնք կը ցանկանան մասնակցել ընդհանուր ժողովին:
Ընկերութեան 1894 թ. տեղեկագիր ստանալ ցանկացողները թող բարեհաճեն դիմել ընկերութեան գրասենեակը — Բարեաւանակալ փողոց, տուն Գրեկովսկայի, սկսած ամսին 24-ից:
(№ 45) 2—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ օրանով յայտնում է ընդհանուրի գիտութեան, որ Թիֆլիսի պ. Նահանգապետը, ապրիլի 13-ին 1895 թ.ի, հաստատեց երկամսեայ կայարանից ֆայետով քաղաք դալու տական 60 կոպէկի կանեցի՝ համար, 75 կոպէկի տեղ:
(№ 43) 3—3

ԿԱԿԱՕ ԲԼՕԿԷՐ
ՍՆԵԴԱՐԱՐ ԽՄԻՉՔ (գլխաւոր պահեստը Ռուսաստանի համար «ԵԱՎԱ» ֆիրմայի մէջ. (С.-Петербургъ, Большая Морская, 38).
Յախում է կոլոնիալ և դեղային ապրանքների բոլոր լաւ մագաղիսներում 1/2, 1/4 և 1/8 կիլոգրամանոց թիթեղեայ տուփերի մէջ:
(GRAND PRIX) Բարձրագոյն պարգև Անտվերպէնի համաշխարհային ցուցահանդիսում 1894 թ.ին:
(№ 151) 26—50

ԴՊՐՈՑ ԵՒ ՊԱՆՍԻՈՆ
Վ. Ի. ՏԵՐՑՈՎ ՍԷՓԵԱՆԻ
(Սալոնիկ, Սափօվայա փողոց, № 46)
ԱՇԽԱԵՐՏՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԾԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է
(№ 37) 6—6

НЕМЕЦКАЯ ГОСТИНИЦА
HOTEL NIEMIECKI, «ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՐԱՆՈՑ» գտնվում է ՎԱՐՇԱՎԱ-ՅՈՒՄ, քաղաքի կենտրոնում, նորից վերաշինված, ունի 90 կահաւորված նոսրեր, որոնց սարք ու կարգը ամենալաւ արտասահմանեան հիւրանոցների սենեակներին է նման: Նոսրերների գինը 50 կոպէկից մինչև 3 ռուբլի օրական, անկողնով և ծառայով: Հիւրանոցում կայ ընթերցարան-գրադարան, որտեղ ստացվում են հայերէն «Մշակ» և «Նոր-Կար» լրագիրները, հիւրերի համար անվարձ: Կայ բէստօրան, տեղեֆոն, քաղցրեղէնների խանութ, լրագրիներ:
Հիւրանոցի մէջ գտնվում են բոլոր երկամսեային կայարաններում:
(№ 21) 126—130 (2)